Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-651-21.08.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետում «անցնող» բառից հետո լրացնել «կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետի «բ» ենթակետում «զինծառայողին» բառից հետո լրացնել «կամ թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը,

բ. 2-րդ կետի «բ» և «ե» ենթակետերում «զինծառայողի» բառից հետո լրացնել «կամ թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը.

2) 5-րդ մասի 1-ին կետի առաջին նախադասությունում «ավարտից» բառից հետո լրացնել «կամ սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն հատուցման գումարները վճարված համարվելուց կամ վճարումը դադարեցվելուց» բառերը.

3) 6-րդ մասում՝

ա. առաջին նախադասությունում «ապա» բառից հետո լրացնել «հաշվարկվում է» բառերը, իսկ «վերահաշվարկվում է՝ Հիմնադրամի խորհրդի սահմանած կարգով» բառերը հանել,

բ. երկրորդ նախադասությունում «վերահաշվարկի» բառը փոխարինել «հաշվարկի» բառով,

գ. 2-րդ կետում «ապա» բառից հետո լրացնել «Հիմնադրամի խորհրդի սահմանած կարգով» բառերը, իսկ «տարբերությունը:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, այս դեպքում հատուցման գումարների վճարումը դադարեցվում է սույն կետում նշված տարբերությունը շահառուին (շահառուներին) վճարելու դեպքում, իսկ ամսական հավասար վճարի չափը սահմանվում է նոր Հատուցման դեպքի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված ամսական հավասար վճարի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «արտակարգ իրավիճակների նախարարությունը կամ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը կամ Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարությունը կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 15. Դրոշմանիշային վճարն ինքնուրույն վճարելը**

1. Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը կատարում են մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա մայիսի 1-ը ներառյալ, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ, հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման համապատասխան բազաները:»:

Հոդված 5. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջին ընթերցում

Լրամշակված նախագիծ

(Կ-651-21.08.2023-ՊԱ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» 2016 թվականի դեկտեմբերի 15-ի ՀՕ-245-Ն օրենքի (այսուհետ՝ Օ~~ր~~ենք) 2-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետում «անցնող» բառից հետո լրացնել «կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետի «բ» ենթակետում «զինծառայողին» բառից հետո լրացնել «կամ թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը,

բ. 2-րդ կետի «բ» և «ե» ենթակետերում «զինծառայողի» բառից հետո լրացնել «կամ թափուր զինվորական պաշտոնի նշանակված զինվորական ծառայության մեջ չգտնվող» բառերը.

2) 5-րդ մասի 1-ին կետի առաջին նախադասությունում «ավարտից» բառից հետո լրացնել «կամ սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն հատուցման գումարները վճարված համարվելուց կամ վճարումը դադարեցվելուց» բառերը.

3) 6-րդ մասում՝

ա. առաջին նախադասությունում «ապա» բառից հետո լրացնել «հաշվարկվում է» բառերը, իսկ «վերահաշվարկվում է՝ Հիմնադրամի խորհրդի սահմանած կարգով» բառերը հանել,

բ. երկրորդ նախադասությունում «վերահաշվարկի» բառը փոխարինել «հաշվարկի» բառով,

գ. 2-րդ կետում «ապա» բառից հետո լրացնել «Հիմնադրամի խորհրդի սահմանած կարգով» բառերը, իսկ «տարբերությունը:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, այս դեպքում հատուցման գումարների վճարումը դադարեցվում է սույն կետում նշված տարբերությունը շահառուին (շահառուներին) վճարելու դեպքում, իսկ ամսական հավասար վճարի չափը

սահմանվում է նոր Հատուցման դեպքի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված ամսական հավասար վճարի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում «արտակարգ իրավիճակների նախարարությունը կամ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը կամ Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարությունը կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«ՀՈԴՎԱԾ 15. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՎՃԱՐԵԼԸ~~
«Հոդված 15. Դրոշմանիշային վճարն ինքնուրույն վճարելը

1. Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը կատարում են մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա մայիսի 1-ը ներառյալ, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա ապրիլի 20-ը ներառյալ, հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրոշմանիշային վճարի հաշվարկման համապատասխան բազաները:»:

Հոդված 5. ~~ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ~~ **Եզրափակիչ մաս**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (փաստաթղթային կոդ՝ Կ-651-21.08.2023-ՊԱ-011/1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում «(այսուհետ՝» բառից հետո օրենք բառը դարձնել մեծատառ՝ օրենքի նախագծի 5-րդ հոդվածում կիրառված «օրենք» բառից տարբերակելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող 15-րդ հոդվածի վերնագիրը գրել փոքրատառերով և թավ՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում «ենթաօրենսդրական» բառից հետո ավելացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: